<<Վարդանանք>> կրթահամալիր

Ուսումնական հաստատության հերթական

ատեստավորման ենթակա ուսուցչի վերապատրաստում

# Հետազոտական աշխատանք

## Թեմա՝ Սովորողների վարքային գործոնի ռիսկային ազդեցությունը

Վերապատրաստվող՝ Սիրանուշ Հովհաննիսյան,

Երևանի Յ.Լեփսիուսի անվան թիվ 88 հիմնական դպրոց

Վերապատրաստող՝ բ.գ.թ. Գայանե Մուրադյան

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Նախաբան

2. Ծխախոտի վնասները

3. Ալկոհոլի ազդեցությունը օրգանիզմի վրա

4. Թմրամիջոցների վնասակար ազդեցությունը

5. Վերջաբան

# ՆԱԽԱԲԱՆ

Ռիսկային գործոնները համարվում են մեր դարի չարիքները:

Չնայած չարիքի դեմ եղած առողջ ապրելակերպի լուսաբանման ջանքերին՝ աշխարհում ամենուրեք, իսկ Հայաստանում մասնավորապես, քանի գնում, շատանում է մարդկանց թիվը, ովքեր իրենց վարքագծով քայքայում են սեփական և շրջապատողների առողջությունը ու կամաց-կամաց իջնում կյանքի հատակը:

Միաժամանակ, ծխամոլությամբ, ալկոհոլիզմով և թմրամոլությամբ զբաղվողները մեծացնում են վարակիչ հիվանդությունների, մասնավորապես՝ ՁԻԱՀ-ի, B և C հեպատիտների, հերպեսի և այլնի ձեռքբերման և տարածման հավանականությունը:

Ծխախոտը, ալկոհոլը և թմրամիջոցները արագ փոխում են մարդուն: Նրանք դառնում են ինքնամփոփ, կորցնում հին ընկերներին, ձեռք բերում անկանխատեսելի վարք:

Անձի տարրալուծման այս երևույթների մասին պերճախոս, բայց միակողմանի տեղեկատվությունը միշտ չէ, որ հավասարապես է ընկալվում մանկական ուղեղի և հոգու կողմից: Հնարավոր է, այդ է պատճառը, որ հավաստի փաստը, թեկուզ որ ճակատին խփվի, դժվար է հիշվում: Ավելի լավ է աշակերտը ինքը գնահատի և արտահայտի իր միտքը:

Պետք է ուսուցիչ-աշակերտ միասնական ուժերով վեր հանեն այդ չարիքների վնասները և փոխադարձ օգնությամբ հեռու մնան այդ չարիքներից:

# ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՎԱՐՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՆԻ

# ՌԻՍԿԱՅԻՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

Ներկայումս ՀՀ-ում սովորողների առողջությունը և դրա պահպանումը համարվում է ռազմավարական լուրջ նշանակություն ունեցող խնդիր: Դեռահասային առողջության պահպանման համար անհրաժեշտություն է հանդիսանում առողջության պահպանմանը միտված դասընթացների և տեղեկատվական միջոցառումների իրականացումը:

Առավել թիրախային են հանդիսանում մարզային համայնքներում ապրող երեխաներն ու դեռահասները, որոնք առավել ենթակա են սոցիալական բնույթի բացասական ազդեցությունների: Մարզերում առավել մեծ է վտանգը թմրամոլության և թրաֆիքինգի, արտագնա աշխատանքների հետևանքով սեռավարակների և վերարտադրողական առողջության հետ կապված խնդիրների, ավանդական մոտեցումների պատճառով թյուր ընկալումների և դրանց հետևանքով առաջացող բազմաբնույթ խնդիրների, տեղեկացվածության պակասի և այլն: Թմրամոլությունը, ալկոհոլամոլությունը, վաղաժամ հղիությունը, սեռավարակները այն «զոհողությունների» հետևանքներն են, ինչին գնում են դեռահասներն իրենց համար թանկ հարաբերությունները պահելու, երբեմն որևէ մեկին զարմացնելու կամ դուր գալու, ընկերներից հետ չմնալու, ինչ-որ մեկին նմանվելու, երբեմն պարզապես զվարճանալու համար:

*Սովորողների ռիսկի վարքային գործոնի ազդեցությունը*

Ռիսկային վարքն արտահայտվում է որոշ նյութեր /ալկոհոլ, թմրանյութեր, ծխախոտ/ ընդունելով կամ որոշակի առարկաների կամ գործունեության ձևերի վրա կենտրոնանալով՝ իրականությունից հեռանալու ձգտման մեջ, որն ուղեկցվում է ուժեղ զգացումներով: Հոգեկան վիճակը փոփոխող որոշակի նյութերի օգտագործումը, որևէ առարկայից կամ մարդուց կախվածությունը երբեմն այնպիսի չափեր է ընդունում, որ սկսում է կառավարել մարդու կյանքը՝ դարձնելով նրան անօգնական, զրկում է պայքարելու կամքից: Ադիկտիվ վարքի հակումը հաճախ ի հայտ է գալիս, երբ մարդու կյանքում որոշ բարդություններ են սկսվում (նախկին իդեալների կորուստ, հիասթափություն մասնագիտությունից, սիրելի աշխատանքի կորուստ, ընտանիքի կորուստ, սոցիալական մեկուսացում և այլն): Այդ ժամանակ է, որ թույլ մարդիկ սկսում են ալկոհոլ կամ թմրանյութեր ընդունել, տարվում են մոլեխաղերով, սկսում են չափից շատ ուտել կամ հակառակը՝ իրենց սովի են մատնում: Հնարավոր է, որ չափից ավելի տարվեն որևէ գործունեությամբ: Ադիկտիվ մոտեցման դեպքում զգացմունքային կապերը ոչ թե մարդկանց հետ են զարգանում, այլ՝ անշունչ երևույթների: Այդ ժամանակ է զարգանում «մտածողությունն ըստ ցանկության»: Այսինքն՝ մարդը գիտակցաբար՝ ինքնապաշտպանության նպատակով, իրական է համարում միայն այն, ինչը համապատասխանում է իր ցանկություններին: Նման մարդու համար շրջապատի մարդիկ միայն մանիպուլյացիայի առարկա են, ինչի Ռիսկային կամ ադիկտիվ վարքի բազմազան ձևերը միավորում է ընդհանուր

ադիկտիվ շղթան՝ հոգեբանական վիճակի արհեստական փոփոխման ձգտումը: Մարդը կարող է մի կախվածությունը փոխարինել մեկ ուրիշով: Արդյունքում առաջ է գալիս մի վիճակ, որը կարելի է բնորոշել որպես ապատիա

---

Ռիսկային վարքի առաջացման նպաստավոր պայմաններ

Ռիսկային վարքի առաջացման համար նպաստավոր պայմաններից մեկն էլ փոխըմբռնման բացակայությունն է: Զգացմունքային շփման բացակայությունը փոխարինվում է առարկաների ու երևույթների հետ «շփումով»: Անհաջողության մշտական վախը առաջացնում է այդ տհաճ զգացումից ազատվելու ձգտում, օրինակ, ալկոհոլի օգնությամբ:

Գոյություն ունեն նաև «ամաչեցնող ընտանիքներ, որոնք անընդհատ դժգոհ են երեխաների հաջողություններից: Եթե երեխան հինգերով է տուն գալիս, նրան չեն գովում, այլ խրատ են կարդում, թե նա կյանքում ինչի պետք է հասնի: Հնարավոր է անընդհատ ծաղր կամ հեգնանք: Այդ ընտանիքներում երեխաներն էմոցիոնալ ապահովություն չեն զգում: Նրանց մոտ զարգանում է անվստահություն մարդկանց հանդեպ, նրանք սկսում են խուսափել շփումներից: Ծնողների հետ շփումները փոխարինվում են հասակակիցների կամ կենդանիների հետ շփումներով:

Մյուս նախապայմաններից է անկանխատեսելի էմոցիոնալ ռեակցիաներ ունեցող ծնողի դաստիարակությունը; Երեխաները չգիտեն, թե ինչ սպասեն մեծահասակներից: Նույն արարքի համար նրանց մի անգամ կարող են գովել, իսկ հաջորդ անգամ՝ պատժել: Երեխան իրեն անվստահ է զգում, չգիտի՝ իրեն սիրում են, թե՞ ոչ: Աստիճանաբար այդ անվստահությունը դառնում է բնավորության գիծ և ազդում բոլոր մարդկանց հետ հարաբերությունների վրա: Արդյունքում այդ երեխաները անվստահելի են միջանձնային հարաբերություններում: Նրանք անընդհատ սպասում են հարաբերությունների խզման: Նրանք վստահ չեն ամուսնության կամ ընկերության ամրության մեջ: Իսկ էմոցիոնալ անկայունությունն ուղեկցվում է ադիկտիվ վարքի ձևերով:

Նշված խնդիրները մարդուն դարձնում են անկայուն և խոցելի, ինչն արդեն վտանգավոր է դառնում նրա հոգեկան, ապա և ֆիզիկական առողջության համար:

Վարքի ռիսկային գործոնների թվին են պատկանում ալկոհոլը, ծխածոտը, թմրանյութերը և այլն:

ԱԼԿՈՀՈԼ Այսօր սոցիալական մանկավարժի կարևորագույն խնդիրներից է հանդիսանում մանկական ալկոհոլիզմը: Ընդհանրապես ալկոհոլիզմը սոցիալական տեսանկյունից շեղվող վարքի ձևերից է: Սովորաբար մանկական ալկոհոլիզմի մասին խոսում են այն ժամանակ, երբ դրա նշանները ի հայտ են գալիս մինչև 18 տարեկանը: Դեռահասների համար ալկոհոլիզմի գլխավոր վտանգը այն է, որ թուլացնում է ինքնակառավարումը: Նշենք, որ դեռևս հղիության շրջանում մոր կողմից ալկոհոլի օգտագործումը, ալկոհոլիզմը անդրադառնում է երեխաների վրա և եթե այս երեխաները չեն մահանում վաղ մանկությունում, ապա ամբողջ կյանքում մնում են հետամնաց: Նախադպրոցական տարիքում ալկոհոլիզմի պատճառ կարող են հանդիսանալ ծնողների մանկավարժական անզրագիտությունը և ընտանիքում ալկոհոլի նկատմամբ հետաքրքրությունը: Ծնողների մանկավարժական

անգրագիտությունը երևում է ալկոհոլի ազդեցության մասին ոչ ճիշտ պատկերացումից: Շատ հաճախ ծնողները կարծում են, որ ալկոհոլը լավացնում է ախորժակը, քունը, բուժում է սակավարյունությունը, բայց չէ՞ որ այդ անգրագիտությունը կարող է բերել երեխաների մահվան դեպքեր: Նշենք նաև, որ երեխաների մոտ հարբեցողության զարգացմանը կարող է նպաստել ծնողների վատ սովորույթները: Դեռահասների մոտ պատճառ կարող է հանդիսանալ անբարենպաստ ընտանիքը, անզբաղվածութունը, ալկոհոլիզմի հետևանքների մասին անտեղյակ լինելը: Անբարենպաստ ընտանիքներում երեխան վտանգի մեջ է իրեն զգում, թաքցնում է իր ալկոհոլիզմը, քանի որ այդ ընտանիքներում հաճախ վեճեր են լինում, երեխայի մոտ ձևավորվում է մեղքի զգացում, իջնում է ինքնագնահատականը, նրանց մոտ զարգացած չէ շփվելու կուլտուրան:




**ԾԽԱԽՈՏ** Սովորաբար նարկոտիկը թափանցելով օրգանիզմ՝ կարող է փոփոխել շատ ֆունկցիաներ, իսկ նրա հաճախակի օգտագործումը բերում է հոգեկան և ֆիզիկական կախվածության: Եվ իհարկե լինում են շատ դեպքեր, երբ թմրամոլը այլևս չի կարողանում դադարեցնել դրա կիրառումը, եթե անգամ շատ է ուզում: Թմրամոլությունը նույնպես համարվում է վարքի շեղման ձև, որը արտահայտվում է նարկոտիկից ֆիզիկական կամ հոգեկան կախվածությամբ, որն էլ և առաջ է բերում անձի սոցիալական դեզադապտացիա: Սովորաբար թմրամոլները դադարում են հետաքրքրվել ուսմամբ, դպրոցով, իսկ հետո նաև թողնում են այն, այսինքն կարծես թե թմրամոլության գլխավոր վտանգը ոչ այնքան ֆիզիոլոգիական վնաս հասցնելն է օրգանիզմին, որքան անձի անկումը: Թմրամոլության պատճառ կարող են հանդիսանալ թմրամոլի բնավորության հատկությունները, օրգանիզմի հոգեկան և ֆիզիկական խանգարումները և անձի վրա սոցիալ-մշակութային ազդեցությունը: Պատճառների թվին կարելի է դասել սոցիալ-մանկավարժական և սոցիալական



գործոնները, այսինքն այստեղ կարևորվում է երեխայի դաստիարակությունը ընտանիքում և ադապտացիան դպրոցական կոլեկտիվում: Սա իհարկե սոցիալ-մանկավարժական գործոն է համարվում, իսկ ահա սոցիալական գործոնների թվին կարելի է դասել ռեֆերենտային խմբերի ազդեցությունը և նարկոտիկի կիրառման մոդան: Ռեֆերենտային խմբերում մեծ է խմբի լիդերի ազդեցությունը, որը



չափահաս թմրամոլ է: Նշենք, որ թմրամոլությունը կարող է բերել շատ ու շատ հետևանքների, որոնք ընդհանրացնելով կարող ենք նշել հետևյալը: Կենսաբանական հետևանքներ, այսինքն անձի ակտիվության էներգիայի թուլացում և ընդհանրապես օրգանիզմի թուլացում: Սոցիալ-հոգեբանական հետևանքների շարքին են դասվում երեխայի անձի բարոյա-էթիկական անկումը, այսինքն սկզբից թուլանում, իսկ հետո վերանում է (բացի նարկոտիկից) մյուս բոլոր հետաքրքրություններն ու պահանջմունքները և հոգեբանական կոմֆորտ հնարավոր է միայն նարկոտիկի ընդունման դեպքում: Նշենք, որ թմրամոլությունը կապված է նաև ինքնասպանության հետ, որի հիմնական պատճառը կյանքում անբավարարված լինելն է:

**ԹՄՐԱԴԵՂԵՐ** Թմրադեղի օգտագործումը, դրանց չարաշահումը գաղտնիք չէ, որ



բացասաբար է անդրադառնում մարդու առողջության, ինչպես նաև հասարակության ողջ սոցիալական կյանքի վրա, այդ իսկ պատճառով թմրամոլությունը դարձել է ժամանակի ամենաակտուալ հիմնախնդիրներից մեկը: Գիտնականները և հասարակությունը գտնում են, որ թմրամոլության նման տարածումը ուղի է հարթում մարդկության ոչնչացման համար: Համաշխարհային տվյալներով թմրամոլության հետևանքով առաջացող հիվանդությունները իրենց քանակով զիջում են միայն սիրտանոթային հիվանդություններին: Նարկոլոգիան ժամանակակից մեկնաբանմամբ բժշկական

գիտության ճյուղ է, որն ուսումնասիրում է ալկոհոլիզմի, թմրամոլության նախազգուշացման, բուժման մեթոդները, դրանց առաջացման պատճառները, դրսևորումները: Այս խնդիրները լուծելիս



նարկոլոգիան սերտորեն համագործակցում է հոգեբանության, սոցիոլոգիայի, իրավաբանության, մանկավարժության հետ: Հասարակության մեջ վերջին տասնամյակներում տեղի ունեցող փոփոխությունները նպաստեցին այդ վտանգավոր և արատավոր երևույթների զարգացմանը: Առաջնահերթ խնդիր են դարձել այդ երևույթի վերացման համար այն սոցիալական միջավայրի հետ աշխատանքը, որը կարող է ազդել հիվանդի վարքի վրա: Այս խնդիրների իրականացման գործում կարևոր նշանակություն է ստացել սոցիալական աշխատողի մասնագիտությունը, ինչպես նաև հոգեբանական վերականգնողական ծառայությունների գործունեությունը (սոցիալական հոգեբանական օգնությունը, ընտանեկան թերապիայի խորհրդատվության սենյակները և այլն): Ալկոհոլիզմը, թմրամոլությունը և տոկսիկոմանիան իրարից հստակորեն տարանջատվում են, թեև ունեն ձևավորման շատ ընդհանուր մեխանիզմներ, նման սինդրոմներ, սակայն միևնույն ժամանակ ունեն զարգացման իրենց օրինաչափություններն ու առանձնահատկությունները: ՛Ալկոհոլիկների անձնավորությունը՛ հոդվածում Լեոնհարդը ներկայացնում է իր հայացքները անձի որակների և ալկոհոլիզմի միջև կապի վերաբերյալ: Նրա տվյալներով բոլոր ալկոհոլիկների միայն 1/3-ն է, որ ունեն անձնային սոցիալ կամ փսիխոպատիկ որակներ: Հարբեցողություն ձևավորելու համար կարևոր գործոն է իրադրության ազդեցության տակ գործելու միտումը: Դա մեծացնում է ալկոհոլիկ դառնալու ռիսկը զերակտիվ էքստրովերտների համար,



հուզականորեն անկայուն մարդկանց համար, որոնց մոտ խմիչքի ազդեցության տակ կտրուկ բարձրանում է տրամադրությունը: Ցուցադրական անձանց, ովքեր հակում ունեն իրենց համար նշանակալի մարդկանց ներկայությամբ ալկոհոլ օգտագործելու, ինչպես նաև որևէ հիվանդությամբ սիմպտոմներ առաջացնելու համար սիմուլյացիայի գնալով օգտագործում են դեղամիջոցներ: Ալկոհոլիզմի երևույթի հաղթահարման համար առանձնացվում են մի քանի ուղղություններ, որոնցից առանձնացնենք երկուսը՝

1. Բուժական մոտեցումը, որը ենթադրում է սպիրտային խմիչքներից լիարժեք հրաժարում:

2. Մարդկային իմացական մոտեցման համաձայն անհրաժեշտ է կարգավորել ալկոհոլի օգտագործումը: Այս մոտեցման ներկայացուցիչները համամիտ էին միայն նրանում, որ ալկոհոլիզմի զարգացման ձևավորման ընթացքում վտանգ է իրենից

ներկայացնում պոռթկումը: Այսինքն, երբ մարդը ալկոհոլի ազդեցության տակ, տրվում է հույզերին, զգացմունքներին և կորցնում ինքնավերահսկողությունը: Առաջին մոտեցման կողմնակիցները պնդում են, որ բուժման կուրսից հետո առաջին իսկ կաթիլը հանգեցնում է սովորույթի վերականգնմանը: Ամերիկյան բժիշկների տվյալներով 100 ալկոհոլիկներից միայն 5-ը բուժվելուց հետո չեն տրվում ալկոհոլի գայթակղությանը: Ընդ որում նման երևույթ նկատվում է բուժվելուց հետո առնվազն 4 տարվա ընթացքում: Հասարակության կացության ձևի փոփոխությանը զուգահեռ նշված խնդրով զբաղվող գիտությունը նոր մոտեցումներ են որդեգրում ինչպես ալկոհոլիզմի, այնպես էլ թմրամոլության դեմ պայքարում վերաիմաստավորում են իրենց առջև դրված խնդիրները, աշխատանքի բովանդակությունը: Թմրադեղերի օգտագործումը ոչ բժշկի նշանակումով մարդու առողջության և կյանքի համար լուրջ վտանգ է պարունակում: Թմրամոլ ծնողներից ծնված երեխաների մոտ նույնպես տարբեր հիվանդությունների առաջացման հավանականությունը մեծանում է: Թմրամիջոցներ օգտագործելու հակումներ մարդու մոտ ձևավորվում են հիմնականում դեռահասության, պատանեկության տարիներին: Մասնագետները դա բացատրում են այդ տարիներին բնորոշ ճգնաժամով, տարիքային առանձնահատկություններով, սեռական հասունացման շրջանով, ֆրուստրացիայով, ինքնահաստատման, ինքնաիրացման ձգտումով ընդգծված ինքնուրույնության պահանջմունքով: Ավարտելով դպրոցը՝ նրանք կանգնում են իրենց ապագայի, կյանքի հետագա ուղու ընտրության բավական խնդրահարույց հարցի առաջ: Այս փուլում երբեմն հակասություն են ծագում ծնողների հետ հարաբերություններում: Ծնողները փորձում են օգնել իրենց երեխաներին, ուղղորդել նրանց չափահաս դառնալու, սոցիալական նոր կարգավիճակ ձեռք բերելու տարիքային նոր փուլ անցնելու գործընթացը: Մանկությունից չափահասության անցնելու այս փուլում թմրադեղերի օգտագործումը մարդու կողմից ընկալվում է որպես իր հասունության ինքնահաստատման փորձ: Սակայն թմրադեղեր օգտագործելու համար անհրաժեշտ են հատուկ պայմաններ:



1. Թմրադեղերի առաջարկում, այսինքն արտաքին օբյեկտիվ կամ սուբյեկտիվ հետաքրքրություն, ինչը հասանելի է դարձնում թմրամիջոցը: Ըստ էության նորեկը ինքնուրույն չի համարձակվում թմրադեղեր ձեռք բերել, այլ միայն հակազդում է առաջարկին:
2. Թմրադեղերի առաջին անգամ օգտագործման համար դեռահասի շրջապատում անպայման պետք է օրինակ լինի, ինչը ուսուցանող մոդել է ծառայում անհրաժեշտ գիտելիքների ու կարողությունների հաղորդման համար: Այդ մոդելը որպես կանոն

թմրադեղերի օգտագործման համար դրական հեռանկար է ցուցադրում:
3. Թմրադեղերի օգտագրոծումը պետք է ուղղված լինի դրական հուզակ Ռիսկային վարքի առաջացման նպաստավոր պայմաններ

Ռիսկային վարքի առաջացման համար նպաստավոր պայմաններից մեկն էլ փոխըմբռնման բացակայություննն է: Զգացմունքային շփման բացակայությունը փոխարինվում է առարկաների ու երևույթների հետ «շփումով»: Անհաջողության մշտական վախը առաջացնում է այդ տհաճ զգացումից ազատվելու ձգտում, օրինակ, ալկոհոլի օգնությամբ:

Գոյություն ունեն նաև «ամաչեցնող ընտանիքներ, որոնք անընդհատ դժգոհ են երեխաների



հաջողություններից: Եթե երեխան հինգերով է տուն գալիս, նրան չեն գովում, այլ խրատ են կարդում, թե նա կյանքում ինչի պետք է հասնի: Հնարավոր է անընդհատ ծաղր կամ հեգնանք: Այդ ընտանիքներում երեխաներն էմոցիոնալ ապահովություն չեն զգում: Նրանց մոտ զարգանում է անվստահություն մարդկանց հանդեպ, նրանք սկսում են խուսափել շփումներից: Ծնողների հետ շփումները փոխարինվում են հասակակիցների կամ կենդանիների հետ շփումներով:

Մյուս նախապայմաններից է անկանխատեսելի էմոցիոնալ ռեակցիաներ ունեցող ծնողի դաստիարակությունը; Երեխաները չգիտեն, թե ինչ սպասեն մեծահասակներից: Նույն արարքի համար նրանց մի անգամ կարող են գովել, իսկ հաջորդ անգամ՝ պատժել: Երեխան իրեն անվստահ է զգում, չգիտի՝ իրեն սիրում են, թե՞ ոչ: Աստիճանաբար այդ անվստահությունը դառնում է բնավորության գիծ և ազդում բոլոր մարդկանց հետ հարաբերությունների վրա: Արդյունքում այդ երեխաները անվստահելի են միջանձնային հարաբերություններում: Նրանք անընդհատ սպասում են հարաբերությունների խզման: Նրանք վստահ չեն ամուսնության կամ ընկերության ամրության մեջ: Իսկ էմոցիոնալ անկայունությունն ուղեկցվում է ադիկտիվ վարքի ձևերով:

Նշված խնդիրները մարդուն դարձնում են անկայուն և խոցելի, ինչն արդեն վտանգավոր է դառնում նրա հոգեկան, ապա և ֆիզիկական առողջության համար:

Վարքի ռիսկային գործոնների թվին են պատկանում ալկոհոլը, ծխախոտը, թմրանյութերը և այլն:

ԱԼԿՈՀՈԼ Այսօր սոցիալական մանկավարժի կարևորագույն խնդիրներից է հանդիսանում մանկական ալկոհոլիզմը: Ընդհանրապես ալկոհոլիզմը սոցիալական տեսանկյունից շեղվող վարքի ձևերից է: Սովորաբար մանկական ալկոհոլիզմի մասին խոսում են այն ժամանակ, երբ դրա նշանները ի հայտ են գալիս մինչև 18 տարեկանը: Դեռահասների համար ալկոհոլիզմի գլխավոր վտանգը այն է, որ թուլացնում է ինքնակառավարումը: Նշենք, որ դեռևս հղիության շրջանում մոր կողմից ալկոհոլի օգտագործումը, ալկոհոլիզմը անդրադառնում է երեխաների վրա և եթե այս երեխաները չեն մահանում վաղ մանկությունում, ապա ամբողջ կյանքում մնում են



հետամնաց: Նախադպրոցական տարիքում ալկոհոլիզմի պատճառ կարող են հանդիսանալ ծնողների մանկավարժական անգրագիտությունը և ընտանիքում ալկոհոլի նկատմամբ հետաքրքրությունը: Ծնողների մանկավարժական անգրագիտությունը երևում է ալկոհոլի ազդեցության մասին ոչ ճիշտ պատկերացումից: Շատ հաճախ ծնողները կարծում են, որ ալկոհոլը լավացնում է ախորժակը, քունը, բուժում է սակավարյունությունը, բայց չէ՞ որ այդ անգրագիտությունը կարող է բերել երեխաների մահվան դեպքեր: նշենք նաև, որ երեխաների մոտ հարբեցողության զարգացմանը կարող է նպաստել ծնողների վատ սովորույթները: Դեռահասների մոտ պատճառ կարող է հանդիսանալ անբարենպաստ ընտանիքը, անզբաղվածութունը, ալկոհոլիզմի հետևանքների մասին անտեղյակ լինելը: Անբարենպաստ ընտանիքներում երեխան վտանգի մեջ է իրեն զգում, թաքցնում է իր ալկոհոլիզմը, քանի որ այդ ընտանիքներում հաճախ վեճեր են լինում, երեխայի մոտ ձևավորվում է մեղքի զգացում, իջնում է ինքնագնահատականը, նրանց մոտ զարգացած չէ շփվելու կուլտուրան:

ԾԽԱԽՈՏ Սովորաբար նարկոտիկը թափանցելով օրգանիզմ՝ կարող է փոփոխել շատ ֆունկցիաներ, իսկ նրա հաճախակի օգտագործումը բերում է հոգեկան և ֆիզիկական կախվածության: Եվ իհարկե լինում են շատ դեպքեր, երբ թմրամոլը այլևս չի կարողանում դադարեցնել դրա կիրառումը, եթե անգամ շատ է ուզում: Թմրամոլությունը նույնպես համարվում է վարքի շեղման ձև, որը արտահայտվում է նարկոտիկից ֆիզիկական կամ հոգեկան կախվածությամբ, որն էլ և առաջ է բերում անձի սոցիալական դեզադապտացիա: Սովորաբար թմրամոլները դադարում են

հետաքրքրվել ուսմամբ, դպրոցով, իսկ հետո նաև թողնում են այն, այսինքն կարծես թե թմրամոլության գլխավոր վտանգը ոչ այնքան ֆիզիոլոգիական վնաս հասցնելն է




օրգանիզմին, որքան անձի անկումը: Թմրամոլության պատճառ կարող են հանդիսանալ թմրամոլի բնավորության հատկությունները, օրգանիզմի հոգեկան և ֆիզիկական խանգարումները և անձի վրա սոցիալ-մշակույթային ազդեցությունը: Պատճառների թվին կարելի է դասել սոցիալ-մանկավարժական և սոցիալական գործոնները, այսինքն այստեղ կարևորվում է երեխայի դաստիարակությունը ընտանիքում և ադապտացիան դպրոցական կոլեկտիվում: Սա իհարկե սոցիալ-մանկավարժական գործոն է համարվում, իսկ ահա սոցիալական գործոնների թվին կարելի է դասել ռեֆերենտային խմբերի ազդեցությունը և նարկոտիկի կիրառման մոդան: Ռեֆերենտային խմբերում մեծ է խմբի լիդերի ազդեցությունը, որը

չափահաս թմրամոլ է: Նշենք, որ թմրամոլությունը կարող է բերել շատ ու շատ հետևանքների, որոնք ընդհանրացնելով կարող ենք նշել հետևյալը: Կենսաբանական հետևանքներ, այսինքն անձի ակտիվության էներգիայի թուլացում և ընդհանրապես օրգանիզմի թուլացում: Սոցիալ-հոգեբանական հետևանքների շարքին են դասվում երեխայի անձի բարոյա-էթիկական անկումը, այսինքն սկզբից թուլանում, իսկ հետո վերանում է (բացի նարկոտիկից) մյուս բոլոր հետաքրքրություններն ու պահանջմունքները և հոգեբանական կոմֆորտ




հնարավոր է միայն նարկոտիկի ընդունման դեպքում: Նշենք, որ թմրամոլությունը կապված է նաև ինքնասպանության հետ, որի հիմնական պատճառը կյանքում անբավարարված լինելն է:

ԹՄՐԱԴԵՂԵՐ Թմրադեղի օգտագործումը, դրանց չարաշահումը գաղտնիք չէ, որ բացասաբար է անդրադառնում մարդու առողջության, ինչպես նաև հասարակության ողջ սոցիալական կյանքի վրա, այդ իսկ պատճառով թմրամոլությունը դարձել է ժամանակի ամենաակտուալ հիմնախնդիրներից մեկը: Գիտնականները և հասարակությունը գտնում են, որ թմրամոլության նման տարածումը ուղի է հարթում մարդկության ոչնչացման համար: Համաշխարհային տվյալներով թմրամոլության հետևանքով առաջացող հիվանդությունները իրենց քանակով զիջում են միայն




սիրտանոթային հիվանդություններին: Նարկոլոգիան ժամանակակից մեկնաբանմամբ բժշկական գիտության ճյուղ է, որն ուսումնասիրում է ալկոհոլիզմի, թմրամոլության նախազգուշացման, բուժման մեթոդները, դրանց առաջացման պատճառները, դրսևորումները: Այս խնդիրները լուծելիս նարկոլոգիան սերտորեն համագործակցում է հոգեբանության, սոցիոլոգիայի, իրավաբանության, մանկավարժության հետ: Հասարակության մեջ վերջին տասնամյակներում տեղի ունեցող փոփոխությունները նպաստեցին այդ վտանգավոր և արատավոր երևույթների զարգացմանը: Առաջնահերթ խնդիր են դարձել այդ երևույթի վերացման համար այն սոցիալական միջավայրի հետ աշխատանքը, որը կարող է ազդել հիվանդի վարքի վրա: Այս խնդիրների իրականացման գործում կարևոր նշանակություն է ստացել սոցիալական աշխատողի մասնագիտությունը, ինչպես նաև հոգեբանական վերականգնողական ծառայությունների գործունեությունը (սոցիալական հոգեբանական օգնությունը, ընտանեկան թերապիայի խորհրդատվության սենյակները և այլն): Ալկոհոլիզմը, թմրամոլությունը և տոկսիկոմանիան իրարից հստակորեն տարանջատվում են, թեև ունեն ձևավորման շատ ընդհանուր մեխանիզմներ, նման սինդրոմներ, սակայն միևնույն ժամանակ ունեն զարգացման իրենց օրինաչափություններն ու առանձնահատկությունները: 'Ալկոհոլիկների անձնավորությունը' հոդվածում Լեոնհարդը ներկայացնում է իր հայացքները անձի որակների և ալկոհոլիզմի միջև կապի վերաբերյալ: Նրա տվյալներով բոլոր ալկոհոլիկների միայն 1/3-ն է, որ ունեն անձնային սոցիալ կամ փսիխոպատիկ որակներ: Հարբեցողություն ձևավորելու համար կարևոր գործոն է իրադրության ազդեցության տակ գործելու միտումը: Դա մեծացնում է ալկոհոլիկ դառնալու ռիսկը զգալիորեն

էքստրովերտների համար, հուզականորեն անկայուն մարդկանց համար, որոնց մոտ խմիչքի ազդեցության տակ կտրուկ բարձրանում է տրամադրությունը: Ցուցադրական անձանց, ովքեր հակում ունեն իրենց համար նշանակալի մարդկանց ներկայությամբ ալկոհոլ օգտագործելու, ինչպես նաև որևէ հիվանդությամբ սիմպտոմներ առաջացնելու համար սիմուլյացիայի գնալով օգտագործում են դեղամիջոցներ: Ալկոհոլիզմի երևույթի հաղթահարման համար առանձնացվում են մի քանի ուղղություններ, որոնցից առանձնացնենք երկուսը՝



1. Բուժական մոտեցումը, որը ենթադրում է սպիրտային խմիչքներից լիարժեք հրաժարում:

2. Մարդկային իմացական մոտեցման համաձայն անհրաժեշտ է կարգավորել ալկոհոլի օգտագործումը: Այս մոտեցման ներկայացուցիչները համամիտ էին միայն նրանում, որ ալկոհոլիզմի զարգացման ձևավորման ընթացքում վտանգ է իրենից ներկայացնում պոռթկումը: Այսինքն, երբ մարդը ալկոհոլի ազդեցության տակ, տրվում է հույզերին, զգացմունքներին և կորցնում ինքնավերահսկողությունը: Առաջին մոտեցման կողմնակիցները պնդում են, որ բուժման կուրսից հետո առաջին իսկ կաթիլը հանգեցնում է սովորույթի վերականգնմանը: Ամերիկյան բժիշկների տվյալներով 100 ալկոհոլիկներից միայն 5-ը բուժվելուց հետո չեն տրվում ալկոհոլի գայթակղությանը: Ընդ որում նման երևույթ նկատվում է բուժվելուց հետո առնվազն 4 տարվա ընթացքում: Հասարակության կացության ձևի փոփոխությանը զուգահեռ նշված խնդրով զբաղվող գիտությունը նոր մոտեցումներ են որդեգրում ինչպես ալկոհոլիզմի, այնպես էլ թմրամոլության դեմ պայքարում վերաիմաստավորում են իրենց առջև դրված խնդիրները, աշխատանքի բովանդակությունը: Թմրադեղերի օգտագործումը ոչ բժշկի նշանակումով մարդու առողջության և կյանքի համար լուրջ վտանգ է պարունակում: Թմրամոլ ծնողներից ծնված երեխաների մոտ նույնպես տարբեր հիվանդությունների առաջացման հավանականությունը մեծանում է: Թմրամիջոցներ օգտագործելու հակումներ մարդու մոտ ձևավորվում են հիմնականում դեռահասության, պատանեկության



տարիներին: Մասնագետները դա բացատրում են այդ տարիներին բնորոշ ճգնաժամով, տարիքային առանձնահատկություններով, սեռական հասունացման շրջանով, ֆրուստրացիայով, ինքնահաստատման, ինքնաիրացման ձգտումով ընդգծված ինքնուրույնության պահանջմունքով: Ավարտելով դպրոցը՝ նրանք կանգնում են իրենց ապագայի, կյանքի հետագա ուղու ընտրության բավական խնդրահարույց հարցի առաջ: Այս փուլում երբեմն հակասություն են ծագում ծնողների հետ հարաբերություններում: Ծնողները փորձում են օգնել իրենց երեխաներին, ուղղորդել նրանց չափահաս դառնալու, սոցիալական նոր կարգավիճակ ձեռք բերելու տարիքային նոր փուլ անցնելու գործընթացը:



Մանկությունից չափահասության անցնելու այս փուլում թմրադեղերի օգտագործումը մարդու կողմից ընկալվում է որպես իր հասունության ինքնահաստատման փորձ: Սակայն թմրադեղեր օգտագործելու համար անհրաժեշտ են հատուկ պայմաններ:

1. Թմրադեղերի առաջարկում, այսինքն արտաքին օբյեկտիվ կամ սուբյեկտիվ հետաքրքրություն, ինչը հասանելի է դարձնում թմրամիջոցը: Ըստ էության նորեկը ինքնուրույն չի համարձակվում թմրադեղեր ձեռք բերել, այլ միայն հակազդում է առաջարկին:

2. Թմրադեղերի առաջին անգամ օգտագործման համար դեռահասի շրջապատում անպայման պետք է օրինակ լինի, ինչը ուսուցանող մոդել է ծառայում անհրաժեշտ գիտելիքների ու կարողությունների հաղորդման համար: Այդ մոդելը որպես կանոն թմրադեղերի օգտագործման համար դրական հեռանկար է ցուցադրում:

3. Թմրադեղերի օգտագրոծումը պետք է ուղղված լինի դրական հուզական վիճակի ձևավորմանը կամ բացասական հույզերի մեկուսացմանը գոնե օգտագործման ժամանակ: Եթե դա այդպես է լինում, ապա յուրաքանչյուր իրադրություն, որում ցանկալի են դրական հույզեր, կամ հարկավոր է խուսափել բացասական հույզերից, մարդուն կդրդի կրկնակի անգամ օգտագործմանը:




Փաստորեն վերը թվարկվածը վկայում է, որ առանց թմրադեղերի, առանց կոնկրետ իրադրության, կամ ոմանց միջամտության, առանց թմրադեղերի ցանկալի գործունեության հնարավոր չէ, որ մարդու մոտ թմրադեղերի նկատմամբ

գայթակղության հակվածություն ստեղծվի: Դեռահասների շրջանում թմրադեղերի օգտագործման սովորույթի ձևավորման գործում մեծապես ազդում է ռեֆերենտային խումբը: Եթե անչափահասի համար էտալոնային դարձած հասակակիցների խմբում արդեն կան թմրադեղերի օգտագործման հակում, ապա նա զիջողականություն դրսևորելով ենթարկվում է խմբում ընդունված նորմերին և վարքի կանոններին, այդ թվում նաև սկսում է օգտագործել թմրադեղեր, դրանով իսկ անչափահասը ապացուցում է տվյալ խմբին, խմբային գործունեությանը իր պատկանելիությունը: Վերջին ժամանակներում դեռահասները,



երիտասարդները նախընտրում են ժամանցի այնպիսի վայրեր, ինչպիսիք են պարասրահները, գիշերային ակումբները: Նման վայրերում նրանք ազատություն են տալիս զգացմունքներին, ուրախանում, լիցքաթափվում է ալկոհոլի օգտագործմամբ, ինչպես նաև թմրամիջոցների, որոնք առաջարկում են նրանց թմրամիջոցների վաճառքով զբաղվողների կողմից: Այստեղ կարող է նաև հարց ծագել, թե ինչպիսի հանգամանքներ, ինչպիսի գործոններ են նպաստում դեռահասների կողմից թմրադեղերի կամ թմրամիջոցների օգտագործման գայթակղությանը տրվելու գործում: Նման հանգամանքներ են ընտանիքում ծնողների կողմից ալկոհոլի թմրամիջոցների օգտագործումը, հեռուստատեսության այնպիսի սյուժեների դիտումը, որտեղ մարդիկ իրենց խնդիրներից, ցավերից, հիասթափությունից, լարվածությունից խուսափելու, դրանք հաղթահարելու համար դիմում են թմրադեղերի օգնությանը: Ծնողների դեռ վաղ հասակից երեխաներին, ընդամենը զվարճանալու համար, տալիս են ալկոհոլ համտեսելու: Ծնողների կողմից գերխնամքը, չափազանցված հոգատարությունը և նրանց պահանջմունքների բավարարում: Թմրամոլության զարգացումը նպաստող գործոնները հիմնականում սոցիալական



հոգեբանական պայմանավորվածություն ունեն և դրա հաղթահարումը, կանխարգելումը պահանջում է տարբեր բնագավառների մասնագետներին՝ հոգեբանին, սոցիալական մանկավարժին, իրավապահներին, բժիշկների համալիր աշխատանք: Նախ անհրաժեշտ է, որպեսզի թմրամոլն ինքնակամ դիմի մասնագետի

օգնությանը, այս դեպքում հավանականությունը մեծանում է, որ մասնագետի հանդեպ թմրամոլը վստահություն կունենա և մասնագետը կկարողանա համոզել, որ բուժումն անպայման արդյունավետ համոզել, որ բուժումն անպայման արդյունավետ



կլինի, իսկ հակառակ դեպքում, երբ թմրամոլի նկատմամբ հարկադրական բուժման մեթոդներ են կիրառվում, ապա վերջիններիս միջև հարաբերություններում կարող է անջրպետ առաջանալ, ինչն էլ անմիջականորեն բացասականորեն կանդրադառնա նրա բուժման գործընթացի վրա: Սա բնականաբար չի նշանակում, որ պետք է բացառել անչափահաս թմրամոլների բացահայտմանն ուղղված աշխատանքը: Անհրաժեշտ է բացատրական զրույց անցկացնել ռիսկի խմբի բոլոր անչափահասների հետ, միաժամանակ խմբի բոլոր անդամների հետ, խթանել նրանց սոցիալական ակտիվությունը, հասարակության մեջ նորմալ կենսական գործունեությունը: Հանդիպում են դեպքեր, երբ թմրամոլն ուզում է ազատվել, սակայն չի դիմում բժշկի օգնությանը՝ մտածելով, որ դրանով իսկ կվարկաբեկի իրեն շրջապատում, կարատավորի իր անունը, այդ իսկ պատճառով բժիշկների, իրավապահ մարմինների աշխատակիցների հետ միասին թմրամիջոցներ օգտագործողների հետ աշխատանքում մեծ դեր է հատկացվում սոցիալական մանկավարժի, հոգեբանի աշխատանքին:

## Հետաքրքրաշարժ փաստեր

- 20-րդ դարի սկզբում հղի կանանց չգիրանալու համար խորհուրդ էին տալիս ծխելը:
- Ծխախոտի թուփը ծնունդով Ամերիկա մայրցամաքից է և պատկանում է այն նույն ընտանիքին, ինչ կարտոֆիլը և պղպեղը:



- Խրոնիկ բրոնխիտը ծխողների մոտ հանդիպում է 5-7 անգամ ավելի հաճախ, քան չծխողների մոտ:
- Աշխարհում հաշվվում է մոտ 120 միջոց՝ ծխախոտի կախվածության դեմ: Գործնականորեն կիրառվում է մոտ 40-ը:
- 1571 թ. իսպանացի բժիշկ Նիկոլաս Մոնդարեսը հրապարակեց «Նոր աշխարհի բուժիչ խոտերի մասին գիրք»: Այնտեղ նա նշել էր, որ ծխախոտը կարող է բուժել 36 հիվանդություն:

- Ծխելու լայն տարածվածության հիմնական պատճառը այն է, որ նրա կործանարար ազդեցությունը ունի ժամանակավոր գաղտնի շրջան, որը ստեղծում է արտաքուստ անվնաս տպավորություն:
- Ծխողների 10%-ի մոտ առաջանում են չարորակ ուռուցքներ, որի հետևանքով էլ նրանք հետագայում մահանում են:
- Ծխելը էականորեն ուժեղացնում է այլ վնասակար գործոնների ազդեցությունը մարդու վրա: Օրինակ՝ եթե մարդը պարբերաբար օգտագործում է ալկոհոլային խմիչքներ, բայց չի ծխում, բերանի խոռոչի, կոկորդի և կերակրափողի քաղցկեղի առաջացումը մեծանում է երկուսից երեք անգամ, իսկ նաև ծխելու դեպքում այդ նույն հավանականությունը մեծանում է մոտ ինը անգամ:



- Ծխողները սրտամկանի ինֆարկտով հիվանդանում են 2-8 անգամ ավելի հաճախ, քան չծխողները: Միևնույն ժամանակ ծխողները 3-4 անգամ ավելի հաճախ անսպասելի մահանում են սրտի իշեմիկ հիվանդությունից՝ առաջին հայացքից նորմալ զգացողության պայմաններում:
- Ծխողների 95%-ը սրտամկանի ինֆարկտից անմիջապես հետո թողնում են ծխելը: Նրանց պետք չեն քարոզները և համոզելը: Հիվանդներն իրենք են կայացնում որոշում:
- 20-րդ դարում ծխելու հետևանքով մահացել են մոտ 100 մլն. մարդ ամբողջ աշխարհում:
- Ծխախոտի ծուխը պարունակում է մոտ 4000 բարդ քիմիական միացություններ, որոնցից 70-ը առաջացնում են քաղցկեղ, եթե նույնիսկ մարդ համարվում է պասիվ ծխող:
- Կա առասպել, որ Պորտուգալիայում ֆրանսիացի դերասան Ժան Նիկոն թագուհի Եկատերինա Մեդիչիին մատուցել է (ընծայել է) ծխախոտը՝ որպես գլխացավի դեմ դեղամիջոց: Ի նշան երախտագիտության՝ թագուհին նոր դեղը անվանել է ընծայողի անունով՝ նիկոտին:
- 1588 թ. ամերիկացի Թովմաս Հարիետը սկսեց քարոզել ծխախոտի ամենօրյա օգտագործումը՝ որպես օրգանիզմի առողջացման միջոց: Շուտով նա մահացավ քաղցկեղից:



- Համաձայն Հարվարդի համալսարանի հետազոտությունների՝ ծխախոտի որոշ հայտնի ֆիրմաներ նիկոտինի բաժինը տարեցտարի ավելացնում են:



- 1997-2005 թթ. նիկոտինի քանակը ծխախոտներում ավելացել է 11%-ով:
- Առողջապահության համաշխարհային կազմակերպության տվյալներով՝ յուրաքանչյուր վաճառված 4-րդ ծխախոտը կեղծված է:
- Մինչև 17-րդ դարի վերջը ծխելը անվանում էին չոր հարբեցողություն: Միայն հետո առաջացավ ծխել տերմինը:
- Յուրաքանչյուր 8 վայրկյանում աշխարհում ծխախոտի պատճառով մահանում է մեկ մարդ:
- Թոքերի քաղցկեղով տառապողների 95%-ը ծխողներ են:
- Գիտնականների կարծիքով ծխող մարդը ծխելու հետևանքով իր կյանքից կորցնում է միջինը 14 տարի:



- Քչերը գիտեին, որ ծխելու հետևանքով օրական մահանում է մինչև 50 հազար մարդ, իսկ հիվանդությունները, որոնք առաջանում են ծխախոտի չարաշահումից, ամսական մահանում է 300-400 հազար մարդ:



- Խիստ սարսափելի է վիճակագրությունը այն մասին, որ 300 մլն. երեխա տառապում է հիվանդություններով, որոնք առաջանում են ծխախոտի չարաշահման հետևանքով:
- Խմող մարդու կյանքի տևողությունը կրճատվում է 15-20 տարի: Միջինում այդ մարդիկ ապրում են 40-50 տարի:
- Առողջապահության համաշխարհային կազմակերպության տվյալներով մոլորակի յուրաքանչյուր 3-րդ բնակիչ մահանում է ալկոհոլի չարաշահումից:

- Ալկոհոլը վնասում է մարդու բոլոր օրգան-համակարգերը: Առավել շատ ազդում է ուղեղի, լյարդի և նյարդային համակարգի վրա: Նույնիսկ երկու գավաթ գարեջրից մահանում է 6500 նեյրոն, որոնց վերականգնման համար անհրաժեշտ է մոտ 4 տարի:
- Սպիրտը և նրա քայքայման արգասիքները օրգանիզմում պահպանվում են 20 օր:



- Ալկոհոլը անմիջական ազդեցություն ունի ուղեղի վրա, որը արտահայտվում է ոչ կայուն քայլվածքով, տեսողության մթագնմամբ, դանդաղեցված ռեակցիայով, հիշողության և կոորդինացիայի մասնակի կամ լրիվ կորստով: Դա տեղի է ունենում նույնիսկ մի քանի գավաթ ալկոհոլ օգտագործելուց հետո, որը, ճիշտ է, սկզբնական շրջանում անցնում է ալկոհոլը օրգանիզմից հեռանալուց անմիջապես հետո, իսկ ալկոհոլի պարբերաբար օգտագործման ժամանակ այս երևույթները աստիճանաբար կրում են անդառնալի բնույթ:
- Կնոջ օրգանիզմի վրա ալկոհոլն ունի ավելի քայքայիչ ազդեցություն, քանի որ կնոջ ուղեղն ավելի ընկալունակ է ալկոհոլի նկատմամբ, ավելի արագ են ախտահարվում նյարդային համակարգը, լյարդը և սիրտը:
- Ալկոհոլի երկարատև օգտագործումը ի վերջո բերում է լյարդի ֆունկցիայի խանգարման, օրգանիզմի ընդհանուր դիմադրողականության իջեցման և, որպես հարբեցողության հետևանք, առողջության մակարդակի անկման:



- Ալկոհոլը չարաշահողների մոտ հաճախ ի հայտ է գալիս Վերնիկեի էնցեֆալոպատիա, որը 80-90% դեպքերում զարգանում է նաև Կորսակովի պսիխոզ: Դրա ախտանշաններն են
- չափից դուրս գրգռվածություն
- մշտական դեպրեսիվ վիճակ
- բռնկունություն
- քայլվածքի անկայունություն
- շարժման կոորդինացիայի խանգարում



- Մարմնի զանգվածի 1 կգ-ին ավելի քան 6 գ. բաժին ընկնող ալկոհոլը մահացու չափաբաժին է:




- Յուրաքանչյուր թմրամոլ թմրամոլության մեջ ներքաշում է 13-15 մարդ՝ նպաստելով թմրամոլության տարածմանը:
- Անընդհատ օգտագործման դեպքում թմրամոլի կյանքի տևողությունը կազմում է 7-10 տարի:
- «Հանուն հարբեցողության» շքանշանը շնորհվել է Պյոտր I-ի ժամանակաշրջանում՝ որպես պատիժ ալկոհոլամոլությանը: Շքանշանը ձուլվում է թուջից՝ 6,8 կգ քաշով և կախում էին «մեղավորի» պարանոցից:

## Վերջաբան

Մարդկությանը վաղուց է հայտնի ալկոհոլը, թմրանյութը և ծխախոտը: Սկզբնական շրջանում չէին պատկերացնում այս երեք վնասակար նյութերի օգտագործման հետևանքների մասին: Հետագայում պարզվեց, որ այս երեք նյութերը քայքայում են մարդու օրգանիզմը և տանում դեպի մահ: Մենք՝ մանկավարժներս, պետք է ավելի հանգամանալից բացատրական աշխատանքներ տանենք աշակերտների հետ և օգնենք նրանց՝ հեռու մնալ դրանցից: Մեր խնդիրն է.

- բազմաթիվ օրինակների օգնությամբ ցույց տալ այն ճանապարհը, որը մարդը կանցնի՝ օգտագործելով դրանք
- հատկապես անհրաժեշտ է կանգ առնել ՄԻԱՎ-ի վրա՝ որպես համամոլորակային խնդիր
- ցույց տալ, որ սրանք վնաս են ոչ միայն օգտագործողի, այլ նաև՝ շրջապատի համար
- հանցագործությունների մեծ մասը կատարվում է այս նյութերի ազդեցության տակ
- կարող է նորմալ ընտանիքի կործանման պատճառ դառնել

Ամեն անգամ այս մասին խոսելիս մեջբերում եմ Զորի Բալայանի «Բաց նամակ նորապսակներին» աշխատությունից, հատկապես այն մասը, որտեղ խոսվում է այն մասին, որ հմուտ վարպետը, խմիչք օգտագործելու պատճառով, ունենում է երեք մտավոր թերզարգացած երեխա: Նա, խորը գիտակցելով իր մեղքը, վերջ է տալիս իր կյանքին: Սա բազմաթիվ օրինակներից մեկն է, որ խմիչքի օգտագործումը կարող է ճակատագրական լինել ինչպես ներկա ընտանիքի, այնպես էլ ապագա սերնդի համար:

Ուրեմն, յուրաքանչյուր մարդ պետք է ոչ միայն չօգտագործի, այլ նաև մյուսներին խորհուրդ չտա օգտագործել այս երեք վնասակար նյութերը:

# ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ

Ծխախոտի ծխի ազդեցության հետևանքով տարեկան 18600 երեխա ծնվում է նորմայից զգալի ցածր քաշով: Գրանցվում է 27000 նորածինների հանկարծամահություն:

Եթե երեխան 4-5 ժամ գտնվում է ծխի միջավայրում, 5 անգամ մեծանում է հանկարծամահությունը:

2002թ. Մեծ Բրիտանիայում պասիվ ծխելու հետևանքով մահացել է ավելի շատ մարդ, քան 1952թ. Լոնդոնում մեծ "սմոգի" ժամանակ:

Ծխելու հետ կապված պրոբլեմների ուսումնասիրմամբ գիտությունը համեմատաբար վերջերս է սկսել զբաղվել:

**Պարզվել է.**

1. Մարդու օրգանիզմում չկա մի համակարգ, որը չտուժի ծխելուց

**2.** Ծխելու վնասը մարդու մոտ կախված է այն բանից, թե նա որքան վաղ է սկսել ծխելը, ինչպես նաև ծխած սիգարետների քանակից

**3.** Ամենից շատ տուժում են նրանք, ովքեր ծխախոտի հետ վաղ հասակից են կապվել

**4.** Նիկոտինի և ծխախոտի ծխի մեջ պարունակվող թունավոր նյութերը խախտում են օրգանիզմի ընդհանուր վիճակը

**5.** Ծխելու ցանկությունը հաճախ հայտնվում է դասի ժամանակ, աշակերտը շեղվում է՝ երազելով միայն այն մասին, թե ինչպես ինքը կներծծի ցանկալի ծխախոտի ծուխը

Նույն, և դեռ ավելի, բացասական ազդեցություն են թողնում նաև ալկոհոլը, թմրանյութերը:

***Յուրաքանչյուր մարդ, առավել ևս մանկավարժ, կոչված է այդ չարիքների դեմ պայքարելու:***

Հայիկյան Մարի





հրդեհ



բնության և օդի աղտոտում



առողջության խնդիրներ



կախվածություն

# ԾԽԱԽՈՏԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ



Գիտական փաստերը հաստատում են, որ ծխախոտի ծխի ազդեցությունը մահվան, հիվանդության և հաշմանդամության պատճառ են հանդիսանում, իսկ ծխախոտի ազդեցությունից առաջացած հիվանդությունների մեջ կա ժամանակակիցն դարար։